

ուած, բամպակեայ լաթի վրայ, խաչածեւ ասեղնազործութեամբ կատարուած այդ ձեւազործները թէ՛ բուն նիւթի, թէ՛ կիրարկման եւ թէ՛ դժարուեստի տեսակէտով բացարձակապէս ՀԱՅԿԱԿԱՆ են, Կիլիկիան Մարաշի գործ: Ասոնցմէ ճոխ հաւաքածոյ մը ունենալով՝ առիթ ունեցած եմ զանոնք ուսումնասիրելու:

Գովելի է Տիկ. Դաւթեանի եռանդը՝ կարելի եղածին չափ ասեղնազործութիւն նկարեալ ներկայացնելու: Սակայն, կարելի էր տրուած նկարներէն մեծ թիւ մը վերցնել՝ առանց գործին որեւէ կերպով վնասելու: Խնամով նկարներ ներկայացնելը մեծապէս կը սատարէ գործին: Կարիք չկայ շատ եւ աւելորդ բան ներկայացնելու, ինչպէս որ պէտք չէ անյալող մանրամասնութեամբ նկարներ տպել: Ասեղնազործութեան հատորի մը մէջ, տպածոյ վարագոյրներ, թիւով 5 հատ, ներկայացնելու հարկ չկայ: Տպածոն ասեղնազործութիւնն է: Մարաշի բազմաթիւ կտորներ ներկայացուած են, բոլորն ալ անյալող. մէկ կամ երկու մանրամասնութեամբ պարզ կար կը բաւէր: Վերջիններս կամ այդ ոճով բազմաթիւ ձեւազործներ ներկայացուած են. մէկ կամ երկու հատ կը բաւէր. մանաւանդ որ աշխատութիւնը չէ նուիրուած արուեստի այդ կիրարկման: Կան շփոթեցուցիչ կոչումներ ալ. օրինակ՝ «Սեւան» նշանակուած ասեղնազործեալ կտորներ կան, որոնց նմանը կը շինուէր Նոր Զուղա: Յետոյ «Սեւան» անշուշտ կղզիին չ'ակնարկելու: Կարգ մը ասեղնազործութեանց թով զգորգ» նշանակուած է, կամ «գորգուղի», որ շփոթեցուցիչ է: «Գորգ» հոմանիշ նշանակուած է Յով. Պրուզ Երզնկացիէ (ԺԳ. դարուն) «կապերտի»: Գորգը մենք «խաւաւոր» կապերտ կը նկատենք, իսկ «կապերտը» անխաւ գորգ: Թէ ինչո՞ւ համար Տիկին Դաւթեան «գորգ» նշանակած է կարգ մը ձեւազործներու համար, օրինակ Մարաշի ձեւազործին, ինծի կը մնայ անմեկնելի:

Սակայն, պէտք է համեմատել խոստովանիք որ Տիկ. Սերիկ Դաւթեան ցարդ անզուգական գործ մը տուած է

մեզի, ըստ կարելւոյն մշակելով խոսքն եւ լքուած կարեւոր դետին մը: Վերի մեր նշումներով ուղեցի շնչեղ որ պէտք է շարունակել Տիկ. Դաւթեանի կարեւոր գործը՝ պատրաստուած ոյժերով: Ասեղնազործութիւնը կը պատկանի մեր մոլոցուած մանր արուեստներու երկար շարքին, ու մաղթելի է որ Հայաստանի գիտական հաստատութիւններէն յառաջ գան հայ երիտասարդուհիներ, որոնք լրջօրէն հետեւին Տիկ. Դաւթեանի առաջնորդող քայլերուն: Հսկայական եւ անդաւնալի կորուստ տուած ենք ձեռագործի՝ թէ՛ ժամանակով, թէ՛ վանտալութեամբ, եւ թէ՛ մեր սոցիալութեամբ: Իցի՛ւ թէ կարենայինք փրկուած քիչ ինչը օգտագործել: Այդ քիչ ինչն ալ կը պարտինք Սերիկ Դաւթեանի անձնագոհութեան:

Էջ 77 կը տրուին յիշատակարանները՝ Երեւանի Պատմութեան Թանգարանի ձեռագործներուն, որոնց մեծագոյն մասը ԺԸ. դարէն են. հնագոյնը վարչամակ մըն է, թիւ 1886, ՊԾԹ (1410) Թուակահանէն, իսկ երկրորդ հնագոյնը՝ Ժածկոց մը, թիւ 1775, 1595էն, եթէ յիշատակարանը ճիշտ կարդացուած է: Կը տրուի նաեւ ցանկ մըն ալ իջմիածնի եկեղեցական թանգարանին իրերուն, որոնց մէջ հնագոյնն է թիւ 282 վարչամակ մը, ՌՂԱ (1642) Թուակահանէն: Իրապէս ազագուծ ժառանգութիւն՝ հայ ժողովուրդի դարաւոր ձեռագործական հարստութեանն է:

Շնորհակալութեամբ կը փականք Սերիկ Դաւթեանի այս կարեւոր վաստակը՝ ցարդ իր տեսակին մէջ առաջինը:

Յ. ԳԻՒՐՏԵԱՆ

* * *

ԴՈՒԻՆԻ ՄԻՋՆԱՒԱՐԵԱՆ ԱՊԱԿԻՆ 9-13րդ դարերուն

Գրեց

ՀՈՒՓՍԻՄԷ Մ. ՋԱՆՓՈՒԼԱԿԱՆ

Երեւան, 1974, էջ 76, եւ 132 մկարմեր, 20 էջ գծագրակամ տախտակներով, քառաթաղ, լաթակազմ:

Հայաստանի հնագիտական յուշարձաններու շարքին կարեւորագոյն աշխատութիւն մըն է՝ զոր հմտօրէն մեզի կու տայ Տիկին Զանփուլադեան, գիտական լրջութեամբ եւ առանց աւելորդաբանութեան: Պրակիս խմբագիրը եղած է բազմազմուտ վաստակաւոր փրոֆ. Կարոյ Ղաֆաղարեան, որուն ձեռնհաս տնօրէնութեան տակ՝ յառաջ կը տարուին Դուինի պեղումները. ատոնց շնորհիւ յայտնագործուած է ներկայ հատորին ապակեղէնի հաւաքածոն, ըլլայ հատակոտոր, ըլլայ ամբողջական: Այս մեծարժէք հաւաքածոն այժմ կը պահուի Երեւանի Պետական Պատմական Թանգարանին մէջ:

Անմիջապէս ըսենք թէ ինչ որ զըստնուած է Դուինի մէջ ապակեղէն, անպատճառ հայկական գործ չէ: Գտնուած են նաեւ օտար երկիրներէ ներմուծեալ կտորներ: Տիկին Զանփուլադեան մեծ ձեռնհասութեամբ եւ նոյնիսկ քիչ մը ժուռկալօրէն կը ներկայացնէ Դուինի Միջնադարեան ապակեղանները: Տիկինը համեմատութեամբ «ցուցակ» կը կոչէ իր այս արժէքաւոր աշխատանքը (կատալոգ), եւ սակայն ընթերցողը չուսող կը տեսնէ գիտական ըմբռնումով պատրաստուած գործ մը, որ ժուռկալ է ներկայացուածով, շատ զգոյշ՝ վերագրումներով, եւ խղճամիտ՝ դասաւորումով: Ասիկա մեծապէս օգտակար է ապագայ ուսումնասիրողին, նա մանաւանդ օտար գիտնականներու, որոնց համար Տիկինը իր գործը հրատարակած է հայերէնին կից նաեւ ռուսերէն եւ անգլիերէն բովանդակութեամբ: Հայոց համար շատ ու շատ նորութիւն է հայկական ապակեղանները: Ինչ որ հրատարակուած է եւ ինծի ծանօթ ու մատչելի՝ դրեթէ աննշան է, համեմատութեամբ այն արժէքաւոր գործին՝ զոր Տիկ. Զանփուլադեան ներկայ իր այս աշխատութեամբ մեզի կու տայ:

Էջ 7ով կը սկսի «Ներածութիւն»ը, ուր համառօտ եւ ամփոփ գիծերով ուրուագիծը կը տրուի պատմական Դուինի: Իբր հայկական մանր արուեստներու զարգացած կարեւոր կեդրոն, Անիի հետ

առաջնակարգ դիրք կը զբաւէ ինչպէս նաեւ իբր մանր արուեստի իրերու ժամանակուան համաշխարհային կեդրոն, ուր չինականին հետ՝ մինչեւ Բիւզանդիոն պատրաստուած իրեր կը հրապարակուէին ու կը վաճառուէին:

1937էն սկսեալ, Դուինի պեղումները՝ վաստակաւոր փրոֆ. Կարոյ Ղաֆաղարեանի անձնուրաց աշխատութեամբ՝ հետզհետէ ի լոյս բերին բլրացած աւերակներէն անհատնում եւ թանկարժէք մանր արուեստի նիւթեր: Նոյնպէս մեծ դանձ հայ վաճառականութեան նկարագրի մասին: «Հայաստանի տեքստիլայում գտնուած ապակեայ իրերը զալիս են հնագոյն ժամանակներից, այսինքն՝ Ուրարտական ժամանակաշրջանէն իսկ» (էջ 9, Բ. սիւն): Մեր մատենագրութիւնը ցաւալիօրէն ժուռկալ է ընդհանրապէս մեր մանր արուեստներուն մասին հարկ եղած տեղեկութիւնները տալու: Հեղինակուհին միայն Ազաթանգեղոսի եւ Ուխտանէսի թով գտած է փոքր ինչ վկայութիւն՝ Հայաստանի ապակեգործութեան մասին: Կարծես՝ մեր պատմիչները կամաւոր վերապով չեն ուզած մեր մանր արուեստներուն մասին գտնէ նախնական տեղեկութիւններ տալ, եւ մեք ստիպուած ենք հազար չարչարանքով անոնցմէ ճաղել մանր մուշի տեղեկութիւններ՝ հայկական գորգերու, հիւսուածքներէն, թանկագին եւ սովորական մետաղներու, բրոնզազործութեան, յալճապակեգործութեան, փայտափորագրութեան, ապակեգործութեան մասին:

Զանփուլադեան մեզի կու տայ նաեւ Դուինի ապակիներու բազաղորութիւնը՝ տարրալուծմամբ: Կ'որոշէ անոնց ժամանակը՝ գտնուած ապակիներու հողաշերտերուն վրայ պեղուած դրամներով: Պարզ է որ եթէ ապակեկտորներ կը գտնուին Ը. դարու հիւրախ հետ, նոյն հողաշերտին վրայ՝ պեղումներուն ժամանակ, ուրեմն ատիկա կը նշանակէ որ այդ ապակին մօտաւորապէս դրամին զարնուելուն ժամանակ շինուած ըլլալու է: Ան կը խօսի ապակեշինութեան զանազան ձեւերուն մասին: Կը խօսի նաեւ

անոնց սեփական յատկանիշներուն, զարգացողութեան բնական մասին: Մենք շատ յատկանշական կը գտնենք գնդիկազարդ ապակեման, որոնք կրկնուած են Դուրի-նի բրոնզադրոշմութեան եւ Կոստինական յախճապակեգործութեան մէջ: Զարդա-րելու այս ոճը կը խորհրդաւորուի հայկա-կան է:

Տիկին Զանփուղեան կը խօսի «բու-ֆի գրեթէ մակագրեալ» (էջ 15բ) ապա-կեայ իրերու մասին: Բնական է համա-ձայն ենք որ մեծագոյն մասամբ իրը զարդաձեւ գործածուած են անոնք, եւ նոյնիսկ ամենայնոցէն գործածուածներն իսկ անընթեռնի են: Սակայն, առիկա ԱՆՊԱՅՄԱՆ չենք կրնար վերագրել արա-բերէն բուֆի գրեթէ բնական իմաստին ան-ժանօթ հայ արուեստագործներու, որով-հետեւ բոլոր մահմետական ապակեգործ-ները արաբադէս չեն: որ կարենային ջուֆի գրածներ վերանշարժել: Դուրիի մէջ, ուր հայ ապակեգործներու շարքին՝ անշուշտ կային նաեւ ո՛չ հայ, վրացի, իսլամ, արաբ, պարսիկ ապակեգործներ ալ, որոնք անտեղեակ էին ջուֆի գրե-րու իմաստին. եւ երբ կ'օրինակէին՝ հետաքննարկելով ջուֆի գրութիւնները անիմաստ գծախումբի մը կը վերա-ծէին: Ինչ ալ ըլլայ, կրնանք ըսել որ բոլոր ջուֆի գրութիւնները՝ որոնք գոր-ծածուած են, անպատճառ արաբ, պար-սիկ կամ իսլամ արուեստագործի ձեռքէն ելած չեն, քանի որ՝ շատ հաւանաբար՝ կային հայ արուեստագէտներ ալ, որոնք թէ՛ կրնային հարազատօրէն օրինակել ջուֆի գրութիւնները, եւ գուցէ նոյնիսկ կրնային ջուֆի գրածներ կարգաւ: Թէ՛ կային ջուֆի-արաբադիր մակագրու-թիւնները ընթեռնի կերպով արուեստ-ագործող իսլամ վարպետներ, յայտնի է Դուրի գտնուած ձուգձուգ ապակի կը-տորէն, որոնք վրայ կը կարդացուի դը-րոշմով: Պատրաստել է Արդալլահի որդի Ալին» (էջ 22բ): Այս կտորը կըր-նայ նախ այլուր պատրաստուած եւ Դուրի բերուած ըլլալ: Յետոյ կրնայ հայ ապակեգործ վարպետի մը՝ իրը զարդաձեւ հարազատօրէն եւ ընթեռն-

լիօրէն օրինակուած ըլլալ: Անմիջապէս աւելցնենք՝ որ հայ ունէ արհեստագոր-ծական երկմտելու պիտի օրինակէր քու-ֆի կամ այլ օտար գրածներ (յուսարէն, ասորերէն, երբայեցերէն, լատիներէն, պարսկերէն, թուրքերէն, եւայլն), զար-դարելու համար իր մէկ գործը: Սա-կայն, բոլորովին անհաւանական է որ իր գրացի օտարներէն ունէ մէկը հայերէն գրեթէ զարդարէր իր ձեռագործը:

Գուֆի գրածներուն գործածութեան մասին թող ներուի ինծի հոս քիչ մը եր-կարել, քանի որ մեծ կապ ունի Դուրիի ապակիներու ոմանց ծագումին հետ:

Ողբացեալ Ա. Զօպանեանի «Անա-հիտին մէջ (1932, Թ. 1-2) հրատարա-կեցի «Հայ եւ արաբ գեղարուեստի յա-րաբերութիւնը» ուսումնասիրութիւն մը, ուր կը գրէի ջուֆի գծաձեւով գործերու մասին. «Պարզ է որ մահմետական մը պիտի չեղծէր, կապէր իր սուրբ գրա-ձեւերը, այլ պիտի օրինակէր հարազա-տութեամբ եւ երկիւղածութեամբ. թող որ Դուրանին մէկ տողը իր ջուֆի ձե-ւով՝ աւելի գեղեցիկ, աւելի շահեկան եւ աւելի նպատակաւոր պիտի գտնէր: Մինչ քրիստոնեայ մը, առանց տատամսելու, նոյնիսկ նպատակաւոր կերպով, պիտի ուզէր կեղծել, որովհետեւ Դուրանը ի-րեն համար ատելի էր՝ զայն պաշտող ժողովուրդներուն պէս, որոնք անոր ան-ուամբ միշտ իր գլխուն ամէն տեսակ պատուհասներ կը բերէին. բայց քրիս-տոնեան՝ այսինքն Հայը ըլլալով խո-րապէս գեղարուեստագէտ, ազդուելով ջուֆի գրածներին գեղեցկութենէն, պիտի ներշնչուէր անկից եւ գծագրութիւն մը պիտի կազմէր՝ որ իր ատած կրօնքին եւ գրեթէ հետ ունէ յարաբերութիւն չու-նենար, եւ նոյն ատեն ունենար անոր ճաշակաւոր արուեստը» (էջ 73-74): Մի-այն ո՛չ մահմետական մը պիտի յանդգ-նէր, օրինակ, ջուֆի գրածներով գործի գօտինքը ստեղծել, որոնց վրայ կրնար կոխել, նստիլ, ճաշել, պառկիլ, ինչպէս է, անգամ մը ջուֆի գրածներ զարդա-ձեւի վերածուելով եւ գործածուելով՝ մահմետականներն ալ առանց խղճահա-րութեան կ'օգտուէին անոնցմէ, զանոնք

լով գծաձեւ նկատելով, բոլորովին ան-կախ իր սրբազան նկարագրէն: Պարս-կական ձեռագրերնեւ մէջ ալ կը հան-դիպինք գործերու մանրանկարներու, ո-րոնք ջուֆի գրածներէ ծագած զարդաձե-ւեր են: Ինծի ծանօթ են ձեռագիր Ա-ւետարաններ՝ որոնց խորաններուն մէջ նոյնիսկ լաւ կերպով ընթեռնի ջուֆի գրեթէ գլխազարդեր կան, շրջուած վի-ճակով ծաղիկաւ: Յաճախ կը հանդի-պինք Աւետարանի մանրանկարներու (Հաղարտի, Կիրակոս ծաղիկողի) որոնց մէջ պատկերացուած անհատներու թե-ւերուն հոգեւորութիւնը գօտինք կան՝ ա-րաբադիր: Կարելի է շատ երկարել այս շարքը, սակայն այսքան ալ կը բաւէ՝ ապացուցելու համար որ հայ ծաղիկ-ող, գորգաշէն, ապակեգործ, յախճա-պակեգործ, մետաղագործ որեւէ խղ-ճահարութիւն չունէին ջուֆի գրածներ-ով զարդագործ գործածելու ատեն: Ինչ որ ալ աւելի կարեւոր է՝ սա է որ մենք մեր դարացի ժողովուրդներուն մէջ (քրիս-տոնեայ) չենք հանդիպիր ջուֆի գրա-ձեւէն յառաջացած զարդաձեւերու: Պա-տահաբար վրացական մանրանկարչու-թեան մէջ կը գտնենք ջուֆի գրածներ իրարազատ օրինակութիւններ, եւ ոչ թէ անոնցմէ յղացուած զարդաձեւեր:

Ուրեմն, անտարակոյս կրնանք պըն-դել որ ջուֆի (քիւֆի) գրածներ յառա-ջացած զարդաձեւերը, մանր արուեստ-ներու մէջ, հայ արուեստագէտներու յը-ղացումն են: Սակայն, չենք կրնար պըն-դել որ ջուֆի գրածներ, ընթեռնի կամ ոչ, իրը զարդաձեւ գործածուած, ան-պայման հայու կամ մահմետականի գործ է, քանի որ երկուքն ալ կրնային գոր-ծածել զանոնք, առանց զանոնք որոշ զարդագործութիւն վերածելու:

Դուրիի մէջ գտնուած ջուֆի զարդա-ձեւ նմոյշները, որ տուած է Տիկ. Զան-փուղեան, կատարուած կ'երեւին ա-պակին կաղապարի մէջ փչելով, եւ կամ կակուղ վիճակի մէջ ապակին նախապէս պատրաստուած կաղապարով դրոշմելով (նկար թիւ 7, 121 եւ 120): Զեռանկար-եալ են թիւ 58 եւ 70 հատակտորներու տախտակներու զարդերը:

Դուրի գտնուած կտորներուն մէջ, ըստ իս՝ գեղարուեստական մեծարժէք կտորներ են թիւ 41, 71, 101, 102 եւ 118: Վերջինս կանթով սակառիկ մը՝ որուն վրայ ապակեթելով, ըստ երեւոյթի, ջուֆի գրածներ կան: Շահեկան են թիւ 97 եւ 98, որոնք միջազեռեան գծաձե-ւեր կ'արձանագրեն: Շատ ցաւալի է որ ընդհանրապէս կտորուած կտորներ են գտնուածները: Յուսանք հետզհետէ պե-ղումներէ յայտնուին աւելի ամբողջա-կան կտորներ՝ Երեւանի Պետական Պատ-մական Թանգարանը զարդարելու հա-մար: Տարակոյս չկայ որ աւելի լաւ վի-ճակի մէջ կտորներ տարուած են հա-րոյական Թանգարանները, նախկին ան-հատական պեղումներու ժամանակ դըտ-նուած, որոնք այժմ ուրիշ վայրերու արտադրութիւն կը նկատուին տգիտօրէն:

Զանփուղեան կը վկայէ որ «մինչեւ այժմ Դուրիում եւ նրա շրջակայքում ապակեգործական արհեստանոցի հետքեր չեն յայտնաբերուել»: Երբեք չենք կրնա-կուհին կ'աւելցնէ, «սակայն Թուրք դա-րում քաղաքն անկառնած ունեցել է իր արհեստանոցները, ուր պատրաստուել են բազմապիսի առարկաներ» (էջ 17): Ուրեմն, պէտք է խորհիլ որ եթէ ցարդ Դուրիի մէջ ապակեգործարան չէ գըտ-նուած՝ ներկայ պեղումներուն ընթաց-քին, գուցէ գտնուին ցայժմ չպեղուած քաղաքամասերուն մէջ: Այլապէս՝ ըս-տիպուած պիտի ըլլանք խորհելու որ ա-պակեգործարանները կը գտնուէին Դու-րիի շրջակայքը, մօտաւոր կեդրո-նի մը մէջ, չէն կամ գիւղական, ուր-կէ Դուրիի բազմապիսի կարիքները կը հայթայթուէին, տեղ մը՝ ուր կար յար-մար հում նիւթ եւ առատ վառելանիւթ:

Այսպէս ջուֆի ունի նկարներու ցան-կեր, երեք լեզուներով, որոնց մէջ ուս-սերէնը մանրամասնագոյնն է: Վերջա-պէս կու գան գումարներ եւ անոնք ա-պակեկարներ: Յաւանքօրէն ներկայա-ցուած կտորներուն չափազանցութիւնները չեն տրուած, ո՛չ հայերէն եւ ոչ ալ ան-գլիներէն: Նկարներուն տակ որեւէ ծա-նօթագրութիւն չէ տրուած, բացի նկա-րաթիւէն:

Կարեւոր աշխատութիւն մըն է որ մեզի կու տայ Տիկ. Հովհաննէսի Զան- փուլադեան իրապէս, մինչեւ հիմա բո- լորովին անկոխ գետին մը առաջին ան- զամ ըստ պատշաճի ներկայացնելով եւ ուսումնասիրողներուն մատչելի ընելով, որուն համար անտարակոյս պէտք է ե- րախտապարտ ըլլանք:

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

* * *

ՅՈՎՀ. ԱՐՔԱՍ. ՍԵՐԱՍՏԱՑԻ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍԵՐԱՍՏԻՈՑ»

Քննական քննարկ, քննադատական մկա- տնագործումներ, ծանօթագրութիւններ, քառարաններ եւ անուանացանկ: Պա- տրաստեց Բ. Լ. ՉՈՒԳԱՍՅԱՆ: Երե- ւան, Մատենադարանի երտ. 1974, էջ 240, ութածալ, լաթակազմ:

Արժէքաւոր աշխատութիւն մըն է հրատարակուածը, որ զարմանալիօրէն անտիպ մնացեր է գրեթէ 150 տարի, թէ- եւ ծանօթ է եղեր աշխատութիւնը եւ օգտագործուել է 1865էն սկսեալ: Զու- ղասզեան իր «Առաջաբան»ին մէջ խղճ- մըտօրէն կը ներկայացնէ թէ՛ հեղինակը եւ թէ՛ իր գործը, նոյն ատեն մեզի տա- լով համեմատեալ գիտական ընտիր հրա- տարակութիւն մը: Կը նշէ որ Պատմ. Սեբաստիոյ գործէն երկու օրինակ Ներու- սաղէմի վանքը բերուած են՝ Սեբաստիոյ փրկուած ձեռագիրներուն հետ: Երկու օրինակ ալ կը գտնուի Վենետիկի Միխ- քարեանց վանքը, ուշ օրինակութիւն մըն ալ՝ Երեւանի Մատենադարանը:

Զուգասզեան կը գրէ որ «Սեբաստիա- յի վանքերի ձեռագրերից մի քանիսը պատահաբար փրկուել եւ պահուած են զանազան ձեռագրատներում» (էջ 7): Գուշակեան Պատրիարք Ժամանակին ցու- ցակադարձ էր 283 ձեռագիր, որ մա- սամբ հրատարակուեցաւ «Հանդէս Ամս- օրեայ»ի մէջ, իսկ ամբողջը 1961ին, ա- ռանձին հատորով: Սեբաստիոյ ձեռա- գիրները մեծ Ոճիւրէն ետք բերուեցան Կ. Պոլիս եւ Հայոց Պատրիարքարանին յանձնուեցան: Հոն հասնելէ յետոյ՝ Ռուս-

լիների մանրանկարած հռչակաւոր Աւե- տարանը նախ Աղեքսանդրիա (Եգիպտոս) տեսայ, երբ ինծի առաջարկուեցաւ ծա- խու: Աւետարանը ճանչնալու չգնեցի, սակայն վերջը Նիւ Եորք գործող համ- բաւաւոր հայ հնամանաւ մը զայն ծա- խեց Ուալթըրի թանգարանին՝ ի Պալ- թիմոր, Միացեալ Նահանգներ: Տարա- կոյս չկայ որ ձեռագիրը գողցուած էր Պատրիարքարանէն եւ յոյն հնամանաւ մը Աղեքսանդրիա բերուած, ու յաջոր- դարար Ուալթըրի թանգարանին ծախ- ուած: Վերջապէս կարելի եղաւ Սեբաս- տիոյ ձեռագիրները, որքան որ կը յիշեմ 137 հատ, Երուսաղէմի վանքը փոխա- դրել: Քանի մը հատ ալ հոսկէ հոնկէ իմ ձեռքս անցած են, եւ մաս կը կադ- մեն իմ հաւաքմանս, որոնց մէջ են եր- կու երկաթագիր մագաղաթեայ Աւետա- րաններ, մէկը ընտիր եւ ծանօթ գեղա- գիր կողմայէ: Ուրեմն, «ձեռագիրներէց մի քանիսը» չէ որ «պատահաբար փր- կուել» են, այլ կարեւոր թիւ մը, ու թերեւս բոլորն ալ փրկուած են, սակայն ո՞վ գիտէ այժմ ո՞ր թանգարանին կամ անհատին քով կը պահուին:

Սպառիչ է Զուգասզեանի «Առաջա- բան»ը, եւ ցոյց կու տայ խղճամիտ պըր- պըտում: Ան իբր բնագիր գործածած է Երուսաղէմի թիւ 3246 ձեռագիրը, որ Գուշակեան ցուցակին թիւ 235ն է: Զու- ղասզեան օգտուած է միւս օրինակու- թիւներէն, տողատակի մէջ նշանակելով ինչ ինչ կարեւոր տարբերութիւններ:

Էջ 29ով կը սկսի բուն պատմութիւնը: Սկիզբը կարճ նախաբան մը՝ հեղինա- կէն, եւ էջ 32ով կը սկսի «Յաղագս հիմ- մարկութեամ եւ շինութեամ Սրբայն Նը- շանի չֆնադատիպ վամիցս, որ ի մայրա- քաղաքս Սեբաստիա», առաջին գլուխ: Կը պատմուի Յովհաննէս-Սենեքերիմ Ար- ծրունեաց թագաւորին Վասպուրականը լքելը եւ Սեբաստիա ապաստանիլը, 1021 թուականին Քրիստոսի, եւ այդ առթիւ հոն Ս. Նշանի վանքը հիմնարկելը: Պատ- մագիր Յովհաննէս Արքայ. Սեբաստացի օգտուած է ծանօթ հայ պատմագրական աղբիւրներէ, որով նորութիւն մը չենք

գտներ: Այսպէս կը շարունակուի մինչեւ գլուխ Ե. որ կը սկսի Քրիստոսի 1288 թուականով: Այս աղբիւրներն ալ որ օգ- տագործուած են՝ արդէն ծանօթ պատ- մական հրատարակեալ աղբիւրներ են, բացի «Ամանուն Սեբաստացու Տարեգրու- քիւն»էն, որ 1956ին հրատարակուեցաւ Վ. Ա. Յակոբեանի «Մամր Ժամանակա- գրութիւններ»-ու Բ. հատորին մէջ, Երե- վան: Հրատարակուած գործին կարեւոր մասը կը սկսի Թ. գլուխով (Քրիստոսի 1637): Էջ 81 կը յիշէ «Պալկեցի Առաքել եպիսկոպոսն», որ էր յայնժամ ի դա- ւառն Եկեղեցաց ի վանս չողային սուրբ Աստուածածինն: Ասիկա պէտք է ըլլայ «Շողայի սուրբ Աստուածածինն»՝ այս- ինքն Շողակաթի, որ Երզնկացիներէն կրճատեալ՝ եղած է «Շողայի», կամ ա- լելի ճիշտ՝ «Շոխայի» ըստ երզնկացւոց: Վանքը՝ ըստ աւանդութեան՝ շինուած էր Թադէոս առաքեալէն, եւ վերաշինուած Մեծն Ներսէսէ: Հետագործարկան են վա- նական իրերու զանազան ցանկերը, որոնց մէջ կը յիշուին «Կարպետ խալիճներ ալ: Կան շահեկան տեղեկութիւններ «Համ- արուեստներու մասին: Կը յիշուի նաեւ որ 1820ին վանքը կը ստանայ Վաղեմի պատուիրեալ յախճապակիքն, այս է Նի- ճիքի Կուտիւն ի Քեթիւհայն քաղաք, զորոյ գլխին յառաջագոյն տուեալ էին, եւ ետուն զվարձր, բերողացն 850 մարշիլ, որ էր իբր չորս հազար, եւ բարձեալ ե- դին յեկեղեցի սուրբ Կարապետին» (էջ 133): Այս չորս հազար Կուտիւնական յախճապակեայ սալերը, որոնք 1820էն առաջ ապսպրուած եւ վճարուած էին, 1820ին միայն կը հասնին Սեբաստիոյ Ս. Նշանի վանքը: 1827ին, վերջապէս, վանքին Աւագ եկեղեցւոյն մէջ կը գոր- ծածուին «յստորուստ յատակէ անտի իբր երեք եւ չորս կանգնաչափ բարձրու- թեամբ, յաղճապակօք, այսինքն՝ չի- նիօք, զոր վաղեմի (ՌՄԿԹ - 1820) պա- տրաստեալ ունէին, չքնադափայլս պըճ- նէին՝ ձեռամբ հմուտ ծեփարարի պարոն Պօղոսի Սեբաստացւոյ» (էջ 146): Այս- պէս, այժմ գիտենք որ Սեբաստիոյ Ս. Նշանի աւագ եկեղեցւոյ յախճապակիքը պատրաստուած են Կուտիւնա, 1820էն քիչ

առաջ. ահա իրողութիւն մը՝ որ արժէ- քաւոր նպատ է Կուտիւնաց յախճա- պակիներու պատմութեան համար:

Գործը ընտիր վաւերաթուղթ մըն է Օսմանեան ապիկաք վարչաձեւին, ա- նոնց դադանութեանց, կաշառակերու- թեանց, գողութեանց մասին: Մենք հոս այդ մասին երկարել աւելորդ կը նկա- տենք, արդէն քաղ ծանօթ իրողութիւն մը կրկնած ըլլալու համար: Զմայլելի է Հայուն յարատեւութիւնը, տոկունու- թիւնը, ամենալատ դրութեան մը տակ՝ շարունակելու շնորհաբարութիւն, կենսաբի բարելաւում, բարօրութիւն: Պահ մը կը տարուիմ խորհելու որ պէտք է այս հա- տորը թարգմանել թուրքերէնի, ինչպէս նաեւ եւրոպական գլխաւոր լեզուի մը, եւ հրատարակել եղածին պէս:

Աշխատութիւնը շահեկան է իր շինա- րարական տեղեկութիւններով, մանրա- մասնութիւններով, բառազանգով: Կը տրուի վանքին շինութեանց չափագրու- թիւնը, մեզի տալով գրեթէ կատարեալ դադափար մը վանքին մասին: Վանքին դրատան մասին, ուր հաւանաբար կը պահուէին նաեւ ձեռագիրները, կը տըր- ուի անկատար տեղեկութիւն: Կ'ըսուի. «Եւ անդր եւ սենական փոքրաւորաց եւ մառանք զանազան իրաց եւ գինեւուն մեծ, յորում է հնձան միաստանի կարծր քարէ, մեծ եւ արուեստաւոր: Է անդ եւ դրատուն փոքրիկ, յորում որչափ ինչ հնար է՝ հաւաքեալ կան գրեմանք եւ հա- ւաքին» (էջ 165): Եւ այսքան միայն. ո՛չ մէկ ծանօթութիւն հաւաքուած գիր- քերուն քանակին կամ որակին մասին, մինչ այնքան մանրամասնութեամբ կը խօսուի, երբեմն ճոռմաբանօրէն, վա- նապատկան ամէն տեսակ չէնքերու եւ ստացուածքներու մասին:

Էջ 168ով կը տրուի 1827ին Սեբաստիոյ Ս. Աստուածածին աւագ եկեղեցւոյ մո- ղովրդեան ցանկը: Կարեւոր է ատիկա, որովհետեւ հոն կը նշուին անձերը ի- րենց արհեստով՝ սովորիչ, մուշտակա- դործ, դերձակ, սենեկապետ, դարբին, եւայլն: Էջ 181ով ալ կը տրուի երկրորդ ցանկ մը՝ Ս. Սարգիս եկեղեցւոյ մօղո- վըրդեան: